

«Մանուկ խան» հեքիաթի մեր ձեռքի տակ եղած ժողովրդական տարբերակներում (հայկական, ռուսական, քաթարական) պատմվում է սովորական մի պատմություն. մեկը խաբեությամբ կողոպտելով ու հափշտակելով հարեւանի հարստությունը, դառնում է մեծփառապաշտ եւ ասպրում փառք ու պատվով: Գրողը հավատարիմ մնալով հիմնական նյութին, դրան ավելացրել է խաբդախ մեկի կողմից՝ իր անունով եկեղեցի կառուցելու եւ քաղաքի առաջին սիրելին դառնալու փաստը: Հեքիաթի գլխավոր հերոսը ներկայացված է ժողովրդական մախա-տիայի բնավորության եւ գործելակերպի բնորոշ գծերով ու յուրահատկություններով: «Մանուկ խան» հեքիաթի, ինչպես նաեւ ժողովրդական այլ տարբերակների հերոսների մեջ, ի հակադրություն իրականում հանդիպող անօրեն դատավորների, ժողովուրդը խառնաճիւղ է իր պայծառ երազանքը արդար ու իմաստուն դատավորների մա-սին:

Աղայանի ֆոնդում է պահվում «Հարազան բլուր» հեքիաթի ինքնագրից մի հատված՝ սեւագիր ջնջում-ներով, մաշված եւ պատված թերթերով: Այս հեքիաթը առաջին անգամ տպագրվել է «Հասկեր» ամսագրում, 1911 թ. առաջին չորս համարներում:

«Հարազան բլուր» թեման պատկանում է աշխարհի ժողովուրդների բանահյուսության մեջ լայն տարածում գտած հեքիաթների սյուժեների թվին: Համարյա բոլոր ժողովուրդներն էլ բազմաթիվ տարբերակներով պահպանել ու պատմել են հրաշք թռչունի, անմահական խնձորի հետեւից գնացող երեք եղբայրների արկածների ու նրանց սպասող չնաշխարհիկ արքայադստեր մասին պատմությունը:

Հայտնի է, որ Թումանյանը երկար տարիներ հավաքել է այս հեքիաթի տարբերակները, մեծ ոգեւորությամբ աշխատել «Հարազան բլուր» պոեմի վրա, որը ցավոք մնացել է անավարտ եւ միայն հատվածներ են տպագրվել:

Վերոհիշյալ հեքիաթը մշակել են նաեւ Ստ. Զորյանը, Աթ. Խնկյանը եւ համանուն վերնագրերով տպագրել իրենց ժողովածուներում: Ամենախոսուն վկայությունն այն է, որ «Հագարան բլուր» Լուովա, Մեղրու, Արցախի, Տարանի եւ այլ տարբերակներ տեղ են գտել այդ գավառների հեքիաթներին նվիրված հատորներում, որոնք հրատարակել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի Ազգագրության եւ հնագիտության ինստիտուտը:

Աղայանի հեքիաթների մշակումները ամբողջովին հաստատում են այն պահանջը, որ բնորոշել է Հովհ. Թումանյանը. «Հեքիաթները անդունդներ են՝ խոր, անձայր, անվերջ... Հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ շնորհիվ հենց էլ պատմելու մեջ է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմել, որ եւ գեղեցիկ դուրս գա, եւ ժողովրդականի համը ու հոտը չկորցնի»¹:

МУРАДЯН А. С. — Из творческой истории сказок Г. Агаяна. Сравнение созданных Агаяном шедевров с его же пометками, правками и замечаниями, сделанными на рукописях, а также с вариантами черновиков из личного архива писателя, хранящегося в Музее литературы и искусства им. Е. Чаренца, - вот ключ для проникновения в творческую лабораторию писателя и ознакомления с его основополагающими принципами литературной обработки.

¹ Ե. Չարենցի անվան քանդաքան, Աղայանի ֆոնդ-8, թիվ 2, էջ 10:

² Հովհ. Թումանյան, Աստվածներ, թեմալոր խոսքեր, «Կենսագրական եւ մատենագիտական տեղեկություններ», Երևան, 1969, էջ 72:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԳՐ ԴԱՏԱՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԻԿՈՅԱՆ

Արամ Հայկազը սփյուռքահայ գրականության սիրված դեմքերից է:

20-ական թվականներից հաստատվելով ԱՄՆ-ում՝ Արամ Հայկազը հասկացավ, որ հայ մնալու եւ հայ ապրելու համար կարեւոր տեղ ունի գրականությունը: Նա համոզված էր, որ միակ ճշմարտությունը հայ լինելն է, իսկ միակ մայրաքաղաքը՝ հայ մնալը:

Բ. Նուրիկյանին ուղղված նամակներից մեկում Արամ Հայկազը գրում է. «20-30 տարուան մեր ճիգերը գրեթե չարդիւնաւորուեցան, ու պառակտուած հայութիւնը այսօր Միջին Արեւելի մէջ, աւելի քան երբեք՝ մօտ է զահաւ-վեժին: Եթէ միացեալ ուժերով աշխատենք, կրնանք քիչ մը աւելի արդիւնք ձեռք ձգել, այսինքն քիչ մը աւելի եր-կար ժամանակ հայ մնալու ու մեր շուրջիները հայ պահել...»

Մենք-ես ու դու ու մեզի պէս խորհողներ, կուսակցական ըլլալէ առաջ հայ եղողներ, չե՞նք կրնար իրար գալ ու բոլոր երկրորդական գծով ու անպատասխան հաշիւներէ վեր եղած՝ մշակութիւն անունով կորիզ մը կազ-մել»:

Ահա այս մտասէտեռնումով էլ Արամ Հայկազը ստեղծում է իր գրականությունը:

Հայրենի երկրի հիշողությունները դեռ վառ էին, իսկ արքայի չորս տարիները «Քյուրդիստանի լեռներում մէջ» սովորեցրել էին նրան յուրովի տեսնել, զգալ, սիրել:

Գրչանուն վերցնելով գոհված եղբոր անունը՝ գրողն սկսում է տպագրվել՝ «ցերեկը հացին ետեւէն վազելով եւ զիշերը միայն գրականութեան կամ ինքնագրագրման յատկացնելով, երբ մարմինը յոգնած է ու աչքերը հանգիստ կը պահանջեն»:

Գրական առաջին իսկ քայլերից Արամ Հայկազը ջերմ ընդունելություն է գտնում ընթերցողներ շրջանում, - այս կամ այն թերթին, ամսագրին. աշխատակցելու բազմաթիվ հրավերներ ստանում:

Արամ Հայկազը կարոտի գրականության հետեւողներից էր եւ փորձում էր վերնագրել անցյալի հիշա-տակները:

Հայրենի եզերքն կորցրած հայն օտար երկնի տակ տառապում էր կարոտից, որը որքան էլ քաղցր էր ու համակող, այնքան էլ ցավատանջ ու տառապազին: Այս կարոտն էլ որոշեց սփյուռքահայ գրականության զար-գացման հետագա ճակատագիրը, նրա լինելության ճանապարհը:

Սփյուռքահայ գրողներից շատերն անցան օտարազրության, ինչպես Շահան Շահնուրը, Լեւոն-Չավեն Սյուրմեյանը, Մայրլ Աղեկը: Չնայած Արամ Հայկազի քարգմանված գործերը վառ չէին հնչում, նա հավատա-րիմ մնաց մայրենի լեզվին՝ որպէս ապացույց պատմելով հետեւյալը. «Երիտասարդ եւ օժտեալ հայ գրող մը նո-րավէպ մը կը պատմէ նշանաւոր Պեղիցի հեղինակ Սօրիս Մեքերիմկիին կըսէ. «Ասիկա կրնամ հայերէն գրել, կամ գերմաներէն, կամ ֆրանսերէն: Լեզուներէն ո՞րը ապահով արտահայտիչը կըլլայ իմ հորավէպիս համար»: Մեքերիմկի կը պատասխանէ. «Ի՞նչ լեզուով կաղօթես»: «Մայրենի լեզուով, անշուշտ», - կըսէ երիտասարդ գրողը: «Ուրեմն պետք է հայերէն գրես, - կըսէ Մեքերիմկի»:

Բեղուն է Արամ Հայկազի գրիչը: Հրատարակել է պատմվածքների բազմաթիվ ժողովածուներ՝ «Յեղին ձայնը» (առաջին եւ երկրորդ հատորները), «Չորս աշխարհ», «Պանդոկ», «Կարօտ», «Երջանկութիւն», «Ապրէք երեխեր», «Չորս տարի Քյուրդիստանի լեռներում մէջ» վեպը եւ «Շապին-Գարահիսարը եւ հերոսամարտը» լայ-նածավալ աշխատությունը:

Կարոտը Արամ Հայկազի գրականությունը բնութագրող հիմնական գծերից է: Հեղինակն ինքսը այս կա-րոտին միախառնված, իր գրականության ներկան անցյալին կապող այս գործը զգացությամբ մեզ տանում է դե-պի անցյալ, քանի որ այնտեղ է հային անհրաժեշտ կենսական ուժի աղբյուրը:

Մակայն սա չի նշանակում, թե հեղինակը չի տեսնում ներկան, չի երազում ապագայի մասին: Եթե փոր-ձենք բնութագրել նրա ստեղծագործությունն ըստ միջավայրի, ապա կտեսնենք, որ նա գրում է չորս տարբեր աշ-խարհների մասին: Հայրենի եզերք. հեղինակը պատմում է հայրենի երկրի, մանկության անհոգ ու երջանիկ օրե-րի մասին, «Քյուրդիստանի լեռներ». գրողի պատմական օրերի հիշողություններն են, արքայի երկար ու ծիզ չորս տարիները: Պոլիսը վերադարձն է դեպի հայկականություն, իսկ Ամերիկան արդեն հեղինակի իրական կյանքն է: Այս աշխարհները անջրպետված, մեկուսացված չեն: Շատ հաճախ ամերիկյան կյանքին վերաբերող որեւէ պատմություն անելիս հեղինակը շեղվում է բուն նյութից, մտքի թելերով թռչում դեպի հայրենի երկիր, ապա վերադառնում իրականություն՝ մի քիչ ավելի թախծոտ, մի քիչ ավելի մեծացած:

Գրականության նյութը նա վերցնում է իրեն շրջապատող մարդկանց կյանքից. «Իմ գրականութիւնս կեանքիս վէպն է. վէպ մը որմն մէջ կը խառնուին քանի մը դրացիներ, ընտանիքիս անդամներ, սերերս-յիմար ու խելօք ու քիչ մըն ալ գաւառացի տղու ապրում...»: Իր ստեղծագործությունների բնարական հերոսն ինքն է՝ հեղի-նակը, որն ամեն մի տողի մեջ բացում է իր հոգին, իր սիրտը: Իր ստեղծագործությունները նա հիմնականում

պատմում է առաջին դեմքով, որովհետև այն «կը կենդանացնէ, կաշխուժացնէ, անմիջականութեան սպասարութիւն կը ձգէ ընթերցողին վրայ»:

Արամ Հայկազի ստեղծած աշխարհում ապրում են սարքերի ազդեցական, սարքեր դավաճանքի տեր մարդիկ: Գրողի անսահման սերը տարածվում է նաև նրանց վրա: չէ՛ որ նրանց մեջ էլ կան հայրենի եզերքը լրացնող մարդիկ, իսկ ընդհանուր վիշտը եւ ցավը մերձեցնում են մարդկանց, դարձնում հարազատ:

Արամ Հայկազի պատմվածքները հենվում են զգացումի, հերոսների հարաբերությունների, դիպաշարի առարկայական ընկալման վրա: Հոգեբանական խոր վերլուծություններ չկան այստեղ, հեղինակը չի էլ փորձում իր միջամտությամբ քափանցել մարդկանց ներաշխարհը, գտնել այն բարդ ու հակասականը, որոնք մղում են որեւէ արարքի: Նրա հերոսները առաջին հայացքից կերպարներ չեն դառնում, չեն տիպականացնում: Եվ ընդհանրապես Արամ Հայկազի պատմվածքները դժվար է ընկալել դասական չափանիշներով: Ինչպե՞ս ինքնատիպ է հեղինակը, այնքան էլ ուրույն ձևով պետք է ընկալել նրա ստեղծագործական աշխարհը:

«Ապրող ծառ մը» պատմվածքում հեղինակը պատմում է մի մրցամակարաշխության մասին: Մեկույն գիշերը բննիչ հանձնաժողովի անդամները հեղինակի գլխավորությամբ պետք է շքանշան հանձնեն ծառը գեղեցիկ զարդարողին: Առաջին հայացքից անհշատ մի նյութ, որը հեղինակի գրչի սակ ձեռնփոխվում է, դառնում համարձակ կազմակերպիչ հերոսը անտառէ մը կտրուած ու զիւղ բերուած մայրի մը, որ աօսական օրերէն վերջ, անխառն սակեղիօրէն պիտի նետուէր վտղոց»: Պատմվածքի դիպաշարը զարգանում է նորավեպիկ բնորոշ արագությամբ: Գեղեցիկ զարդարված բազմաթիվ ծառեր են տեսնում, բայց երկարորոյն մոտակայքում, ուր աղքատ մարդիկ են ապրում, եւ ծառերը զարդարված են հապճեպորեն, նրանց, ինչպես եւ ընթերցողներին, անակնկալ է սպասում:

Դարբին Ֆիլիքրնի դռան աղմուկ են լսում: Մտնելով ներս՝ տեսնում են եղբայների մի մեծ թագմություն, նրանք ուրախ շողալիքաբերով սպասում էին տորթի եւ պաղպաղակի իրենց բաժիններին: Տեսնողը որպիսի բացատրում է. «Հայրս որբանոցէն բերաւ, ւսնոնց վարքի (այստեղ՝ ճաշկերույթ) - Շ. Ն.» կու տանք»: Իսկ դարբինը, որպէս Կաղանդ պապիկ, զգեստավորված, աշխատում է զվարճացնել երեխաներին:

Վերջապահը պարզ է: Երեքի համաձայնությամբ՝ մրցամակը սղծվում է դարբինին: Ինչպէս արդեն ասել ենք, Արամ Հայկազը երկերում դասական առումով կերպարներ չկան: Նա չի նկարագրում հերոսի արտաքինը, սոցիալական հարցեր չի բարձրացնում, բայց պատկերի, մայրկային արարքի եւ չափած բնութագրումների միջոցով ասում է ավելին, քան նկարավոր է: Դարբինը, որ պատմվածքի մեջ նկարագրվում է միայն իր արարքի միջոցով, անպակասանում է, դառնում գրական հերոս: Արամ Հայկազը պատկերների մեծ վարպետ է. «Ես պատկերներով կը խորիմ. նախ պատկերը կու գայ միայն մէջ ու վերջն է որ գայն բառի կը վերածեն»:

«Թուզին ծառը կու լար» պատմվածքում հեղինակը դարձյալ մի պատկերի միջոցով ներկայացնում է հերոսների ներաշխարհը: Եվ որքան էլ հեղինակը շեղվում է բուն նյութից, միևնույն է մեկ նախադասությունը բնական է գնահատելու եւ հասկանալու տեր եւ ակնին Թօսթաաներին, որոնք, չնայած առաջարկված իրավունքի զնն, չեն համաձայնում վաճառել իրենց սումը, որովհետեւ «Եթէ ծախսին, գնողները պիտի կարէին պարտեղի կեդրոնի, իր լայն ու հովանոտ ճիւղերը արեւուն դէմ տարածող թուզին ծառը, որուն ախորժառան ու մեղր թորոյ պտուղներէն ամէն տարի բաժինն ալ կու գար, լայն ու կամայ տերեւներու վրայ շարուած, դիզուած»:

Վիշտ մարդանը, խնայելով բառերի մասին, ասում է. «Ընդհանրապէս մեծ օգուտ մը չունին անոնք: Մենք գանձք կը գործածենք աւելի շատ քաղցնելու ինչ որ իրապէս ըսել կուզենք, եւ կամ ինչ որ չենք ուզեր որ ուրիշները գիտնան»:

Արամ Հայկազը, այլ բաների մասին խոսելով, ցանկանում է քաղցնել կարոտը, դա է քերուս պատմաւոր. որ «Բրուտին արտը» պատմվածքում նա պատմում է Ասովածաշնյան իին ավանդությունը արտի «անտէր մեկներու» մասին, որոնք մահանում են առանց ազգականների, քաղաքային իրավադատարար արտի «անտէր մեկներու» միջոցներով. «Հաւանաբար, ոչ ոք լացած է, կամ ցաւ զգացած անոնց մահուան համար»: Բայց ահա այս բառերի հետևում ծնվում է ցավի իսկական ճիւղ, որն անընդհատ նրա հետ է, դժվար է բողբոջվում այնքան ուժգին է եւ պտղաւոր, որ դուրս է ժայթքում. «Արդեօք ցեղիս կէսին ամապաւնեւում մէջ անտէր ու անթաղ մնացած ըլլալուն համար է որ այսքան խորունկ կը զգամ Հարց Այրնախի՛ անոք մեռելներուն ցար...»:

Արամ Հայկազը բարու, գեղեցիկի պաշտպանն է: Ապրել նշանակում է տեսնել, զգալ արեւը, ծովը, բնությունը: Եվ բանի որ նա ասովածատուր շնորհով ուրույն կերպով է ընկալում բնությունը, գեղեցիկը, ապա շատ արագ է դրան հաղորդակից դարձնել մարդկանց. «Գրեցի երջանիկ լինելու համար, սիրեցի գեղեցկութիւնը ու երբ գայն ցաւայ՝ բաժնեցի շարունակ հետ»:

Արամ Հայկազի գրականության գրավիչ գիծը հումորն է՝ ջերմ է ու համակող, միևնույն ժամանակ՝ մեղմ ու շոյող: Հեղինակը չի ծաղրում, ծաղկում իր հերոսներին, այլ մոտենում է նրանց համակրանքով ու բարությունով: Անհմար է առանց ժպիտի կարդալ նրա գործերը: Մեկ նախադասությունը բավական է ուրախ մթնոլորտ ստեղծելու եւ ընթերցողի շուրթերին ժպիտ առաջ բերելու համար:

«Աշման օր մը» պատմվածքում, ինչպես միշտ, անշնան մի նյութ զարգացնելով, հեղինակն իր գրավիչ ոճով ու հումորով դարձնում է հետաքրքրական եւ ուշագրավ: Հեղինակը լարվածությամբ մեջ է պահում ընթերցողին:

Չմեռային գլխարկ գնելու համար տիկին Հայկազն առաջարկում է ամուսնու միասին խանութ գնալ: Բնականաբար, հեղինակը մտածում է, որ կինը, առանց հետին մտքի, դժվար թէ միայն իր գլխարկի համար այդքան ճանապարհ կտրեր, ուրեմն ինչ-որ բան այն չէ: Նա փորձում է մտովի հիշել, թե մոտակայքում ի՞նչ խանութներ կան, որոնք կհրապուրեն կնոջը, կամ ի՞նչ է թաքնված այդ առաջարկի տակ: Ընթերցողը համոզված է, որ տարիների փորձ ունեցող եւ «կանանց հոգեբանությունն» այդքան լավ հասկացող հերոսը չի սխալվում եւ սպասում է առեղծվածի պատասխանին: Մակայն պարզվում է, որ ոչ մի առեղծված գոյություն չունի: Տիկին Հայկազը պարզապես ուզում է ինչ-որ բան անել ամուսնու համար: Իսկ պատմվածքի սկզբում Արամ Հայկազը անմիջական ու ջերմ մթնոլորտ է ստեղծում մի նախադասությամբ. «Առաջին անգամ ըլլալով կինս անմիջական պատասխան չունեցաւ տալու... Մեղքայ...»:

Արամ Հայկազի հերոսները պարզ մարդիկ են, իսկ նկարագրած դեպքերը կարող են պատահել բոլորի հետ: Նրա ստեղծագործության նյութը մարդն է եւ մարդկայինը, հեղինակի անհատականությունն իր կնիքն է դնում այս ամենի վրա, դարձնում ներկայացանալի եւ ուշագրավ:

«Մանուկիչին մէջ ի՞նչ կար...» պատմվածքում, որն իր կառույցի անթերիությամբ պատիվ կբերեր ցանկացած նորավեպագրի, անշտապ ու անմիջական ոճով նկարագրում է բարեգործական մի հաստատության շենքի արտաքին տեսքը՝ նախապես ասելով, որ աչքի չի ընկնում, եթե չհաշվենք այն հանգամանքը, որ «շենքի արեւելեան պատին տակ, կէսօրէ առաջ ժամը տասնեմեկի պահերուն կազմուիլ սկսող, ու Կ. Վ. Ժամի մեկի ատենները, քանի մը անգամ կարճնալ ու երկնալէ ետք, բոլորովին անհետացող պոչը»:

Մարդոցմէ կազմուած պոչ մը:

Չրի սանտուիչ առնելու եկած բշուռ մարդերէ կազմուած պոչ մը»:

Արամ Հայկազը սեղմ բնութագրումների միջոցով ներկայացնում է մարդկային բնությունը: «Համբերությամբ կը սպասեն մինչեւ որ փոքրիկ դրան վրայ գտնուող աւելի փոքրիկ դռնակը, ուրկէ որդմութիւն է, որ կը բաշխուի, բացուի ու քոյրերէն մէկուն գթառատ դէմքը բարի լոյս ըսէ իրենց: Այն անտեմ աչքերնին վար, երախտագէտ մարդու շնորհակալութեան բառ մը մոմոտալով, կառնեն շատ սպիտակ ձեռքի մը կողմէ իրենց երկարուած սանտուիչը, ու կը հեռանան՝ տեղերնին ուրիշ մը, յաջորդի մը տալով»:

Արամ Հայկազը պատմվածքը կառուցում է գրագի վրա, որ կնքում են հեղինակը եւ իր աշխատակիցներից մեկը՝ Ժողեֆը:

Պարզելու համար որդմութեան են իրենց մեկնումեկը կիրակի օրը (ըստ Ժողեֆի՝ այդ օրը ավելի համեղ «սանտուիչներ» էին բաժանում) պետք է հերթ կանգնեն, սանդուիչ ստանալ, ապա երեքով պատասխանը կզտնեն:

Պատմվածքի վերջապահը անսպասելի է: Հեղինակն այլեւս չի անդրադառնում այն հարցին, թե ինչ կար սանդուիչի մեջ, այլ պարզապես ավելացնում է, որ այժմ, «երբ գթութեան քոյրերը մեր շենքը զան դրամ ժողվելու, որ կարողանան իրենց մարդասիրական գործը շարունակել, մէկական քառորդ կու տանք անոնց: Փախուստի մասին չէինք մտածել ու չենք ալ կարծել, թէ մեր այս յաւելեալ քանի մը սենթի նուիրատուութեան շնորհիւ բարութեամբ է սանտուիչներուն բովանդակութիւնը»:

Նրա պատմելու բացառիկ շնորհը, պատկերներ կառուցելու արվեստը, բառ ընտրելու հմտությունը, ինչպես նաև մայելու եւ տեսնելու ինքնատիպ ունակությունը մեր առջեւ բացում են զարմանալի աշխարհ, աշխարհ, որտեղ ամեն ինչ ներդաշնակ է, այնքան ջերմ ու հարազատ, որ կարծես ընթերցողի մեջ լինի, ընթերցողից սկիզբ առնի: Այս աշխարհում ամեն ինչ միասնական է՝ եւ՝ սերը, եւ՝ վիշտը, եւ՝ ծիծաղը, եւ՝ արցունքը: Ապրել՝ հեղինակի համար նշանակում է տեսնել, զգալ արեւը, ծովը, աստղերը եւ «եթէ օր մը մահուն պահը գայ, ու խնդրազրկա ըլլայ աշխարհէն բաժնուիլ ստիպուած ըլլալու համար, պիտի ավառսամ, ցաւ զգամ... որովհետեւ ալ ոչ զարման գալը պիտի գգամ, եւ ոչ ալ կարենամ ունկնդրել մշտաբերուն ծովուն, խորակներուն վրայ փշրուելուն, շառաչելու աղմուկին» («Ինչու՞ Աստուած»):

НИКОЯН Ш. М. - НЕКОТОРЫЕ СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ РАССКАЗОВ

АРАМА АЙКАЗА. Арам Айказ один из известных армянских писателей диаспоры, им созданы рассказы, романы и научно-исторические исследования. Внутренняя эстетическая структура его рассказов, непривычная в качестве содержания примата, не только оказывает давление на развитие сюжета рассказа, но и на общую структуру данного жанра, т. е. новеллоподобное дает себя знать в систематизированных художественных решениях.